«ՍԵՎԱՆԻ ԽՄԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳԴՊՈՑ»

ՀԵՌԱԿԱՆ ՍՏԵՍՏԱԿՈՍԱՆ ԵՎԹԱԿԱՌՈՒՄՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ -ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԿԱ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻԱԿ ՆՈՒՆԵ ՊԵՏՈՍՅԱՆ

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ N4 ՀԻՍԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ 1. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 6

1.1. «Հայոց պատմություն» առարկայի կարևորությունը, դասավանդման մեթոդիկան 6

1.2. Հայկական դրամի պատմության ակնարկ. դրամահատարաններից մինչև ազգային դրամի շրջանառություն 11

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 14

2.1. Հայկական դրամի պատմության ուսուցանումը 14

2.2. Դասավանդման նորագույն մոտեցումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հայկական դրամի պատմության դասավանդման գործընթացում..... 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

«Հայոց պատմություն» առարկայի դասավանդումն առանցքային նշանակություն ունի դպրոցական առարկաների համալիրում: Առարկայի դասավանդումը սովորողների մոտ ձևավորում է հավաքական հիշողություն, ինչն էլ շարունակականության հիմքով թույլ է տալիս իրականացնել ազգային իղձերը, ձևավորել և պահպանել հայի կերպարը և հայկականությունը: Բացի այդ ուսումնասիրվող առարկայի դասավանդումը նպաստում է Հայաստանի Հանրապետության համար ապագա բանիմաց քաղաքացու ձևավորմանը և կայացմանը, ով հետագայում իր ներդրումը պետք է ունենա պետության և պետական արժեքների զարգացման գործում:

«Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում կարևոր նշանակություն ունեն այնպիսի թեմաները, որոնք առնչվում են Հայաստանի Երրորդ Հանրապետության կայացմանը: Այդ թեմաների թվում կարող ենք նշել Հայաստանի անկախության հռչակագիրը, պետական խորհրդանիշները՝ պետական դրոշը, պետական զինանշանը, պետական օրհներգը, ՀՀ ազգային դրամը:

Հայկական դրամի պատմության դասավանդումը, ինչպես և «Պատմություն» առարկայի այլ թեմաների դասավանդման գործընթացը ենթակա է մշտադիտարկման և նորացման, քանի որ մանկավարժական տեխնոլոգիաների թվում օրեցօր ավելանում են նոր տեխնոլոգիաներ: Միևնույն ժամանակ օրըստօրե զարգանում են տեղեկատվական տեխնոլոգիաների՝ առանձին թեմաների դասավանդման գործընթացում կիրառման հնարավորությունները:

Սա պայմանավորում է դասի կառուցվածքի շարունակական վերանայում՝ նորագույն մոտեցումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառման միտումով: Ընդհանուր առմամբ դասի կառուցվածք ասելով նկատի է առնվում ուսուցման գործընթացում ներառված աշխատանքի տեսակների համադրումը: Նախկինում տիրում էր այն կարծիքը, որ դասը պետք է կառուցված լինի գիտելիքների ստուգումից, նոր նյութի մատուցումից և տնային հանձնարարությունից: Սակայն դա սահմանափակում էր արդյունավետ մեթոդների ընտրությունը: Նախկինում կիրառվող կառուցվածքը համալրվում է նոր կառուցամասերով: Ելնելով ուսուցման արդյունավետության բարձրացման պահանջներից, դասի կառուցվածքը պետք է համապատասխանեցվի մանկավարժական պայմաններին և նպատակներին:

Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորել ենք հայկական դրամի պատմության ուսումնասիրության դասի ընթացքում նորագույն

տեխնոլոգիաների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ դասի կառուցվածքի կատարելագործման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել հայկական դրամի պատմության ուսուցման գործընթացի դիտարկում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընդհանրական ուսումնասիրության, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել «Հայոց պատմություն» առարկայի կարևորությունը, դասավանդման մեթոդիկան,
- կատարել հայկական դրամի պատմության ակնարկ. դրամահատարաններից մինչև ազգային դրամի շրջանառություն,
- ուսումնասիրել հայկական դրամի պատմության ուսուցանման գործընթացը,
- ներկայացնել դասավանդման նորագույն մոտեցումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հայկական դրամի պատմության դասավանդման գործընթացում:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է «Հայոց ապատմություն» առարկայի դասավանդման ընթացքում հայկական դրամի պատմության ներկայացման համատեքստում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում հայկական դրամի պատմության ներկայացման պարագայում) ապահովված արդյունքները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 21 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1. «Հայոց պատմություն» առարկայի կարևորությունը, դասավանդման մեթոդիկան

Ինչպես նշեցինք աշխատանքի ներածական մասում, «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման կարևորությունը դրսևորվում է նրանում, որ առարկան միշտ թարմ է պահում սովորողների հավաքական հիշողությունը:

Առարկայի բովանդակությունը սահմանում են առարկայական չափորոշիչները՝ կրթակարգի հիմնական դրույթներին համապատասխան:

Առարկայի բովանդակությունը սովորողներին մատուցելու արդյունքում նրանց մոտ ձևավորվում են համակարգված գիտելիքներ հայկական քաղաքակրթության տարբեր շերտերի մասին: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը[1]:

Առարկայի դասավանդման արդիականությունը դրսևորվում է նրանում, որ այն ներկայացնում է հայ ժողովրդի անցած ուղին, մեկնաբանում է կենսագրությունն ու միշտ թարմ է պահում սերունդների պատմական հիշողությունը: Առարկայի դասավանդման գործընթացում առանձնակի կարևորություն է տրվում ժողովրդի ներսից բխող հոգևոր և նյութական արժեքների վերհանմանը և սերմանմանը գալիք սերունդների և ՀՀ ապագա քաղաքացիների հոգում: Հայոց պատմության դասավանդման արդյունքում ուսուցիչը ձևավորվում է այն անհատին, որ ապագայում դառնալու է երկրի քաղաքացի, նպաստելու է երկրի զարգացմանն ու շենացմանը և, ինչու ոչ, հավանական լրջագույն դերակատարում է ունենալու համաշխարհային պատմական գործընթացներում:

Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

[1] Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Հայոց պատմություն/ https://escs.am/am/news/6703 15.10.2022, ժամը 11:09 դրությամբ .

Պատմության ուսուցման միջոցների դասակարգումը իրականացվում է ըստ գիտելիքների աղբյուրների՝ ուսուցչի բանավոր խոսք, տարբեր տպագիր նյութեր, պատմական զննական նյութեր, առարկաներ կամ վերակառուցումներ:

Մեթոդական գրականությունը առաջարկում է միջոցները բաժանել 3 խմբի:

1. Սկզբնաղբյուրներ, պատմական փաստաթղթեր, կոնկրետ դարաշրջանի գիտական ուսումնասիրություններ, տարեգրություններ, առասպելներ, գեղարվեստական գրականություն, վիմագիր աղբյուրներ, տեսալսողական աղբյուրներ՝ կինոֆիլմեր, դիմանկարներ, կիրառական առարկաներ:

2. Գիտականորեն մշակված պատմական գիտելիքներ պարունակող միջոցներ՝ դասագրքեր, քրեստոմատիաներ, գիտական գրականություն, նկարներ, քարտեզներ, աղյուսակներ:

3. Արվեստի միջոցներով պատմական իրականության ռեկոնստրուկցիաներ՝ թատրոն, կինո, գեղարվեստական գրականություն, գեղանկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն[2]:

Ուսուցման գործընթացում առավել կարևոր և համոզիչ են առաջին խմբի միջոցները: Սակայն դրանք օգտագործելու համար անհրաժեշտ են որոշակի կարողություններ և հմտություններ: Ուսուցիչը խնդիր ունի դրանք ձևավորելու, ինչը բարդացնում է ուսուցումը:

Առավել լայն օգտագործվում են երկրորդ խմբի միջոցները, որոնք ուսուցման գործընթացը ավելի հետաքրքիր և մատչելի են դարձնում:

Երրորդ խմբի միջոցները կարելի է համարել լրացուցիչ և օգտագործել հատկապես պատմական պատկերացումները արդյունավետ ձևավորելու համար:

2.Մեթոդների, մեթոդական հնարների և միջոցների ընտրություն:

Պատմության դասավանդման գործընթացը պահանջում է գիտականորեն հիմնավորված մեթոդների և հնարքների կիրառում: Դրանք պետք է ընտրվեն ուսուցման նպատակներին և բովանդակությանը համահունչ: Դրա համար անհրաժեշտ է սահմանել մեթոդ հասկացությունը: Մեթոդը ուսուցչի և աշակերտների աշխատանքի միջոցն է, որը ապահովում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ինչպես նաև աշակերտների աշխարհայացքի ձևավորումը և իմացական հնարավորությունները:

Մեթոդիկայի մասնագետները մեթոդները դասակարգում են ըստ գիտելիքների աղբյուրի: Այդ համակարգը առաջադրվել է դեռ Կոմենսկու կողմից և ունի երեք մակարդակ՝ խոսքային մեթոդ, զննական մեթոդ, գործնական /պրակտիկ/ մեթոդ[3]:

---

[2] Кацва Л.А., истории в современной российской средней школе. Размышления консерватора / Л. А. Кацва // Преподавание истории в школе. — 2007. — N 6. — С. 31-36.

20-րդ դարի երկրորդ կեսին մեթոդների դասակարգման համար սկսեցին հաշվի առնել ուսուցման բովանդակությունը, գիտական նպատակները, գիտելիքների յուրացման միջոցների առանձնահատկությունները: Առանձնացվեցին հետևյալ մեթոդները՝

1. Բացատրական- ցուցադրական /տեղեկությունների ուղղակի փոխանցում/,

2. Վերարտադրողական մեթոդ, որը իմացական գործունեության արտացոլումն է,

3. Հիմնախնդրային դասավանդում,

4. Էվրիստիկական մեթոդ,

5. Հետազոտական մեթոդ:

Ինչպես նկատում ենք այս դասակարգման մեջ հաշվի չի առնվում բովանդակությունը: Մեկ այլ դասակարգում առաջարկում է հենվել պատմական գիտելիքների ձևավորման առանձնահատկությունների վրա: Դրանք են՝

1. Պատմական պատկերացումներ ձևավորող մեթոդներ,

2. Ընդհանուր և վերացական պատմական պատկերացումներ ձևավորող մեթոդներ,

3. Պատմական զարգացման դիալեկտիկան բացահայտող մեթոդներ,

4. Անցյալի և ներկայի միջև կապերի հաստատման մեթոդներ:

Ամեն դեպքում մեթոդները պետք է համապատասխանեն պատմական նյութի բովանդակության բնույթին և առանձնահատկություններին: Իսկ դա պահանջում է տարբեր դասակարգումների համադրում: Կարևորելով խնդիրը՝ գիտնականները ուսումնասիրել և առաջարկել են ավանդականի և ժամանակակից մեթոդների հաշվառմամբ ձևավորված մեթոդների համակարգեր:

Այսպես, առաջարկվում է՝

1. բանավոր ուսուցման մեթոդ- ուսուցչի և աշակերտների համատեղ աշխատանք և բանավոր հաղորդակցում,

2. տպագիր տեքստերով ուսուցում կամ տպագիր-խոսքային մեթոդ,

3. զննական ուսուցման մեթոդ, երբ խոսքային ու տպագիր միջոցները համալրվում են զննական նյութերով,

4. գործնական մեթոդ, որը հնարավոր է նյութական ուսումնական առարկաների օգտագործմամբ:

Մեթոդների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել դպրոցական դասընթացի երկու հիմնական բաղադրիչները՝ պատմական նյութի փաստացի և

---

[3] Басова Е.А. Методы обучения: сравнительный анализ современных концепций и взглядов Я.А. Коменского / Е.А. Басова, Д.А. Бондарчук // Интерактивная наука. – 2021. – № 6 (61). – с. 36-38.

տեսական բովանդակությունը: Փաստացի նյութը տարբերվում է ծավալով, բարդությամբ և նշանակությամբ: Բոլոր փաստերը կարող են ուսումնասիրվել էմպիրիկ և տեսական մակարդակներում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ընտրել նյութերի ուսուցման մեթոդները.

1. ըստ գիտելիքների աղբյուրի, խոսքային, զննական, պրակտիկ,

2. ըստ ուսուցչի և աշակերտի համագործակցության՝ զրույց, շարադրանք, ինքնուրույն աշխատանք,

3. ըստ դիտակտիկ խնդիրների՝ ընկալման նախապատրաստում, նյութի բացատրում, ամրապնդում,

4. ըստ աշակերտի իմացական գործունեության բնույթի և գործընթացին ուսուցչի մասնակցության,

5. ըստ գիտելիքների վերլուծության մեթոդների. անալիտիկ /վերլուծական/, համեմատական, հետազոտական,

6. ըստ գիտելիքների հարստացման ձևերի. ինդուկտիվ, դեդուկտիվ, ավանդական:

3.Պատմության բանավոր ուսուցման մեթոդը[4]:

Դասի թեմայի բացահայտումը աշակերտների կողմից, բովանդակության յուրացումը ուղղակիորեն կապված են ուսուցչի աշխատանքից, նրա կողմից ընտրած մեթոդներից, միջոցներից, անձնական վերաբերմունքից: Բաբանսկին նշում է մեթոդներ ընտրելու 6 չափանիշներ.

1.Մեթոդի համապատասխանությունը դասի նպատակին, բովանդակությանը, աշակերտների իմացական գործունեության ձևերին /անհատական, կոլեկտիվ/, աշակերտների ուսումնական հնարավորություններին, դիդակտիկայի սկզբունքներին և ուսուցչի կարողություններին: Բացի այդ, ուսուցիչը հաշվի է առնում նաև աշակերտների վերաբերմունքը, մոտիվացիաները /դրդապատճառները/, ակտիվությունը[5]:

Մեթոդների ընտրության ժամանակ պետք է հիշել դասերի անցկացման ինտերակտիվ սկզբունքի մասին: Մեթոդը պետք է նպաստի աշակերտների մոտիվացված ուսուցմանը և դրսևորել աշակերտակենտրոն մոտեցում:

Դասի նախապատրաստման ժամանակ կարևոր է նաև միջոցների ու հնարքների ճիշտ ընտրությունը: Ուսուցչին անհրաժեշտ է նախատեսել բանավոր

[4] Аникеев А.А., Ушмаева К.А. Методика в организации исторического исследования. – Пятигорск, 2004., с.49.
[5] Шубина, О.Н. Характеристика методов и способов обучения по Ю.К Бабанскому / О.Н. Шубина // Обучение и воспитание: методики и практика. -2016. - № 30-1. - С. 148-149.

խոսքի ու տարբեր ուսումնական նյութերի համադրման հնարքների կիրառումը: Այսպիսի մոտեցումը կնպաստի նյութի գիտակցված յուրացմանը:

Ուսուցման սկզբնական փուլում օգտակար է կիրառել բացատրական-պատկերազարդման մեթոդը: Այս դեպքում ուսուցիչը լրացնում է բանավոր խոսքը գրավոր տեքստով, մշակութային նյութական և հոգևոր հուշարձանների ցուցադրությամբ, կինոնկարով:

Վերարտադրողական մեթոդը ենթադրում է ուսուցչի կողմից սովորողների համար հանձնարարություններ, որը կպահանջի ունեցած գիտելիքների վերարտադրության միջոցով կազմել ճիշտ պատասխանը: Մեթոդը կարող է կիրառվել և՛ գրավոր, և՛ բանավոր:

Հիմնախնդրային շարադրանքի մեթոդը կիրառվում է աշակերտների մտածողության ակտիվացման նպատակով: Հետևելով ուսուցչի շարադրանքի տրամաբանությանը՝ աշակերտը հիմնախնդրի վերաբերյալ կառուցում է սեփական եզրահանգումները: Այս մեթոդը ենթադրում է գիտելիքների օգտագործմամբ մտավոր գործունեության և հիմնախնդրի լուծման ապահովում:

Էվրիստիկական մեթոդը: Մեթոդի նպատակը՝ սովորողներին ներգրավել հիմնախնդրի ինքնուրույն լուծման: Այն պահանջում է աշակերտից փնտրել ու գտնել լուծման ճանապարհ: Մեթոդը իրականացվում է տարբեր ուղիներով՝

1.Էվրիստիկական զրույցի. Ուսուցիչ – աշակերտի համագործակցություն հարց ու պատասխանի ձևով: Զրույցի իմաստը ուսուցչի կողմից այնպիսի հարցերի նախապատրաստումն է, որը խթանելու է աշակերտի ակտիվությունը: Ուսուցիչը հարցերը կազմելիս նկատի է ունենում ենթադրյալ պատասխանները և դրանց տրամաբանական շղթան: Պատասխանների որոնումը բերում է հիպոթեզների առաջացման, ինչը նպաստում է ոչ միայն գիտելիք ստանալուն այլ ունեցած գիտելիքների փոխակերպմանը:

Այս մեթոդին մոտ է հետազոտական մեթոդը: Աշակերտների ինքնուրույն հետազոտական և հիմնախնդրային առաջադրանքների կատարումն է, որը վերահսկվում է ուսուցչի կողմից:

Այսպիսով՝ բացատրական-պատկերազարդման մեթոդը դաստիարակում է ուշադրություն, կարգապահություն, դիտողականություն, վերարտադրողական մեթոդը՝ տրամաբանություն, աշխատասիրություն, համակարգվածություն, հիմնախնդրային մեթոդը՝ ուշադրություն, տրամաբանություն, էվրիստիկականը՝ ինքնակրթություն, պատասխանատվություն, նախաձեռնողականություն և այլն:

Բանավոր խոսքը պատմության դասին: Բանավոր խոսքի գլխավոր գործառույթը նկարագրական –շարադրականն է: Բանավոր խոսքի միջոցով,

պատմակյան կերպարների և տրամաբանական կապերի միջոցով վերականգնվում է անցյալը: Կերպարային և տրամաբանական այս գործառույթները արտացոլում են բանավոր խոսքի դաստիարակչական դերը դասին:

Ուսուցչի կողմից պատմական նյութի շարադրանքը պետք է բավարարի դիդակտիկայի ընդհանուր կանոնների պահանջներին և լինի մատչելի, կոնկրետ ու դիտարկելի: Ընդ որում մատչելիությունը չի բացառում գիտականությունը: Կոնկրետությունը և դիտարկելիությունը պահանջում են զանազան մեթոդների կիրառում: Ուսուցչի լեզուն պետք է լինի պարզ, հասկանալի, գրագետ:

1.2. Հայկական դրամի պատմության ակնարկ. դրամահատարաններից մինչև ազգային դրամի շրջանառություն

Դրամի պատմությունը սկսվում է դեռևս Ք.ա. III դարից: Պատմական աղբյուրները նշում են, որ բոլոր հայկական թագավորություններից տնտեսապես ամենազարգացածը Ծոփքն էր, որն առանձնանում էր արգավանդ հողերով: Հույն պատմիչ Պոլիբիոսը Ծոփքի թագավորության կենտրոնական մասում գտնվող Խարբերդի դաշտավայրն անվանում է «հոյակապ հարթավայր»: Ծոփքի տարածքով էր անցնում Բակտրիայից (ներկայիս հյուսիսային Աֆղանստանի, հարավարևմտյան Տաջիկստանի և հարավային Ուզբեկստանի տարածքներում) Փոքր Ասիա ձգվող մեծ քարավանային ուղու ճյուղավորումներից մեկը: Հայաստանի բոլոր առավել կարևոր առևտրային ուղիներն անցնում էին Ծոփքով, որը գտնվում էր Մերձավոր Արևելքի առևտրային և մշակութային խոշոր կենտրոնների հարևանությամբ: Այս ամենը հիմք հանդիսացավ, որ Ծոփքում, բոլոր հայկական պետական միավորներից առավել վաղ, Արշամ արքայի (Ք. ա. մոտավորապես 243−228 թթ.) հիմնած Արշամաշատ մայրաքաղաքի դրամահատարանում Ք. ա. III դ. դրամ հատվի[6]:

Դրամներն օգտագործվում էին դրանց վրա արձանագրություններ թողնելու նպատակով: Օրինակ, ըստ Արտաշեսյան դինաստիայի՝ Հռոմի գերիշխանությունը չճանաչող ներկայացուցիչների հատած դրամների արձանագրությունների՝ այս գահակալները շարունակել են Տիգրան Մեծի հաստատած ավանդույթը՝ կրելով արքայից արքա, իսկ Հռոմից կախյալ գահակալները՝ մեծ թագավոր տիտղոսները:

Չնայած պատմական բարդագույն ժամանակահատվածների, այդ թվում և Հայաստանի նվաճված լինելու փաստի, դրամահատումը շարունակական բնույթ էր կրում: Անգամ այն ժամանակ, երբ Մեծ Հայքը գրավվել էր հռոմեացիների կողմից, հռոմեացիները, ուժերի անբավարար լինելու պատճառով չեն կարողանում

[6] Մկրտումյան Լ. Ա. Հայոց պատմություն: Ուսումնական ձեռնարկ/ Լ. Ա. Մկրտումյան.–Եր.: Տնտեսագետ, 2016., էջ 23:

վերահսկողություն հաստատել Մեծ Հայքի թագավորության նկատմամբ: Կորբուլոնը չի կարողանում հպատակեցնել հայ ժողովրդին, թեպետ Հռոմում Հայաստանը հայտարարվում է նվաճված երկիր, և այդ առիթով դրամներ են հատվում՝ «Հայաստանը՝ նվաճված» մակագրությամբ:

Դրամի հատմանը մեծագույն տեղ է տրվել նաև հետագայում: Դրամահատան իրավունք ունենալը համարվել է մեծագույն պատիվ: Դրամ հատելու իրավունք տրվել է Դավիթ Բեկին: Լինելով միաժամանակ տաղանդավոր ռազմական գործիչ և մեծ քաղաքագետ՝ Դավիթ-Բեկը կապ է հաստատում Իրանի շահ Թահմասպ II-ի (1729-1732 թթ.) հետ և դաշինք է կնքում: Շահը նրան ճանաչում է Սյունիքի և դրան հարակից տարածաշրջանի կուսակալ: Նրա ենթակայության տակ են դրվում այս տարածաշրջանի բոլոր պարսկական խաները: Նրան թույլատրվում է նաև սեփական դրամ հատել:

Դրամի դերի, նշանակության մասին պատկերացումները հիմնավոր դարձան Հայաստանի 3-րդ Հանրապետության կայացման գործում ազգային դրամի շրջանառության արդյունքում դրսևորված մեծագույն ավանդով:

1991 թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով Հայաստանը հռչակվում է անկախ հանրապետություն: 1991 թ. դեկտեմբերին ՀՀ պետական բանկի վրա են դրվում նորանկախ Հայաստանի Հանրապետության ազգային բանկի գործառույթները: 1993 թ. ապրիլի 27-ին ընդունվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, որով Ազգային բանկը վերանվանվում է ՀՀ կենտրոնական բանկ: Այն ղեկավարում է Իսահակ Իսահակյանը, որը պետական բանկը կառավարում էր 1986 թվականից: Հայաստանի Հանրապետության դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովի 19.11.93 թ. թիվ 15 որոշմամբ ՀՀ տարածքում շրջանառության մեջ է դրվում ազգային արժույթը՝ դրամը[7]:

Արդյունաբերության անկման հետևանքով ծանր կացության մեջ էր հայտնվել Հայաստանի ֆինանսավարկային համակարգը: Մինչև 1993թ. հանրապետությունը կրում էր Ռուսաստանի տնտեսական քաղաքականության ազդեցությունը միասնական դրամական համակարգի առկայության պայմաններում: Դա հատկապես արտահայտվում էր գների համընդհանուր ազատականացման, դրամավարկային և հարկային քաղաքականության բնագավառներում: Չնայած այս ուղղությամբ Հանրապետության իշխանությունների գործադրած ջանքերին՝ Հայաստանն արդպես էլ ամբողջությամբ չընդգրկվեց ռուսական ռուբլու գոտու մեջ:

[7] Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացումները https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx 17.10.2022, ժամը 21:44 դրությամբ .

1993թ-ի նոյեմբերի Հանրապետության կառավարությունը հարկադրված շրջանառության մեջ դրեց հայկական ազգային դրամը:

Ազգային արժույթի կիրարկումից հետո Հայաստանը հնարավորություն ձեռք բերեց ինքնուրույն տնօրինելու տնտեսական բոլոր լծակները: Սակայն համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում դրամն արագ արժեզրկվեց, ինչը ևս նպաստեց սոցիալ-տնտեսական ճգնաժամի խոչացմանը: Սղաճի մակարդակն արագորեն աճեց, տեղի ունեցավ ժողովրդի խնայողությունների և ավանդների յուրացում: Ժողովրդի ներդրած գումարները խնայդրամարկղերում փոշիացան: Միլիոնավոր ռուբլիներ կազմող գումարների փոխարեն ազգաբնակչությունը ստացավ դրանց արժեքից շատ ավելի չնչին արժեզրկված դրամներ, որով գների աճի պայմաններում հնարավոր չէր հոգալ անգամ ամենատարրական կարիքները:

Տնտեսության ծայրահեղ անկայունության, վճարային հաշվեկշռի ծանր վիճակի պայմաններում Հանրապետության կառավարությունը 1994թ.-ին ստացավ Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսական օժանդակությունը և նրա հանձնարարականով սկսեց տնտեսական բարեփոխումների կուրսի իրականացումը, որի գաղափարախոսությունը պարզապես հանգում էր 3 հիմնախնդիրների իրականացմանը՝ ազատականացում, սեփականաշնորհում և կայունացում դրամական զանգվածի կոշտ պլանավորման միջոցով[8]:

Սեփական դրամը շրջանառության մեջ դնելը պետք է կառուցվածքային լուրջ տեղաշարժեր առաջ բերեր հանրապետության ֆինանսական համակարգում: Ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկը, ձևավորվեցին շուրջ 60 առևտրային դրամատներ ու մասնավոր բանկեր: Բանկային վերափոխումները Հայաստանում սկսվեցին 1993թ. Կենտրոնական բանկի մասին և Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքների ընդունմամբ և ազգային դրամը շրջանառության մեջ մտցնելով:

[8] Հայոց պատմություն. Հիմնահարցեր, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:/ Մ.Ա.Կատվալյան, Պ.Հ.Հովհաննիսյան, Լ.Հ.Մկրտչյան և ուրիշներ: Ուս. Ձեռնարկ ոչ մասնագիտական ֆակուլտետների համար./ խմբագիր Հր.Ռ.Սիմոնյան., Եր., Զանգակ-97, 2000., էջ 467:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. Հայկական դրամի պատմության ուսուցանումը

Հայկական դրամի պատմության ուսուցանումը նախատեսվում է մեկ դասաժամի՝ 45 րոպեի ընթացքում: Ուսուցիչը սահմանում է դասի թեման՝ «Հայկական դրամի պատմություն»:

Դասի ընթացքում օգտագործվող նյութերը և տեխնիկական միջոցներն են՝ գունավոր մատիտներ, ներկանյութեր էսքիզներ կատարելու համար, նկարչական թղթեր, պաստառներ, համակարգիչ, տպագրված հայկական դրամներ, աշխատանքային թերթիկներ:

Սովորողը կարողանում է՝

- Ճանաչել տարբեր ժամանակաշրջաններում թողարկված դրամային միավորները,
- Բացատրել, որ փողերի մասին հիշատակումներ եղել են հայոց պատմության խորը ակունքներում, որ դրանց պահպանման և ամրակայման արդյունքում ձևավորվել է հայկական դրամը:

Դասի նպատակն է՝

- Զարգացնել փողի մասին հիշատակումների վերաբերյալ գիտելիքները:
- Զարգացնել հայկական դրամի ստեղծման մասին գիտելիքները:
- Ձևավորել էսքիզներ ստեղծելու և դրանց միջոցով հայկական դրամի նոր տարբերակներ ստեղծելու հմտությունները:
- Խթանել սովորողների համագործակցային հմտությունների զարգացումը:

Որպես վերջնարդյունք սովորողը կկարողանա հիմնավորել այն գաղափարը, որ, հայկական փողը և ազգային դրամն անցնելով պատմական բարդագույն փուլերով, ի վերջո անքննելի դեր են ունեցել Հայաստանի 3-րդ Հանրապետության ֆինանսավարկային համակարգի կայունության ապահովման գործում:

Ուսուցի կողմից սահմանվում են խաչվող գաղափարները:

Մշակել և օգտագործել մոդելներ

Մոդելավորել տարբեր էսքիզներ՝ ապացուցելու համար այն գաղափարը, որ ժամանակի հրամայակի ներազդմամբ հայկական դրամը ևս ենթակա է վերաթողարկման՝ հարմարվելով նոր միջավայրային պայմաններին:

Պատճառ և հետևանք

Հայկական դրամի տարբեր սերունդների գոյությունը բացատրվում է գոյություն ունեցող բոլոր ոլորտների զարգացմամբ և նոր պայմաններին հարմարվելու անհրաժեշտությամբ:

Միջառարկայական կապերը, որոնք սահմանվում են ուսուցչի կողմից, հարում են նկարչությանը և ՏՀՏ հմտություններին: Սովորողը պետք է կարողանա նկարչական պատկերների, համակարգչային ծրագրերի միջոցով ներկայացնել կամայական պարզ մոդելներ:

Ուսուցիչը սահմանում է գնահատման ձևը: Գնահատումն իրականացվում է միավորային գնահատման սկզբունքով՝ հիմք ընդունելով ըստ աշխատանքի գնահատման սանդղակի չափանիշները:

Դասի ընթացքը կազմակերպվում և իրականացվում է խթանում-իմաստի ընկալում-կշռադատում (ԽԻԿ) համակարգի միջոցով:

Խթանում փուլը սկսվում է ուսուցչի կողմից սովորողներին ողջունելով, հաճախելիության գրանցմամբ: Ուսուցիչը սովորողներին է ներկայացնում օրվա դասի պլանը և վերջնարդյունքները: Ապա սովորողներին առաջարկում է հարցեր թեմայի վերաբերյալ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել թեմայի կարևորությունը: Ուսուցիչը դասը վարում է աշակերտակենտրոն մոտեցմամբ, նրանց մասնակցությամբ ամփոփում է հարցերի պատասխանները և համաակարգում հնչեցված գաղափարները:

Ուսուցչի կողմից առաջադրվում են հետևյալ հարցերը, որոնց կից ներկայացնում ենք նաև հնչեցված հնարավոր տարբերակների ամփոփումները:

Ի՞նչ գիտեք հայկական դրամի մասին:

Դրամը կարելի է սահմանել որպես «հատուկ ապրանք»: Հայկական դրամն իր գոյության ուղին սկսել է 1993թ-ի նոյեմբերի 22-ին: Այդ օրը Կենտրոնական բանկի կողմից եղավ հայտարարություն առ այն, որ խորհրդային ռուբլու փոխարեն շրջանառության մեջ է դրվում սեփական ազգային արժույթը:

Ինչպիսի՞ հիշատակումներ գիտեք փողի մասին:

Սովորողները փաստում են, որ Հայաստանում առաջին մետաղադրամները հիշատակվում են Ք.ա. III դարում: Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին մետաղադրամները վերաբերում են Ք.ա. VI-V դարերին:

Ըստ նախնական պայմանավորվածության սովորողներն արդեն իսկ իրենց ձեռքի տակ ունեն տարբեր ժամանակաշրջանների դրամների պատկերները: Փողի մասին հիշատակումների ժամանակ նրանք ներկայացնում են հետևյալ պատկերները՝

Ի՞նչ հիշատակումներ գիտեք Հայաստանի սեփական դրամի մասին:

Սովորողները հիշատակում են այն փաստը, որ դեռևս Ք.ա. III դարի կեսից Ծոփքում սկսում են թողարկել դրամներ: Այդ գործը գլուխ է բերվել Երվանդյան հարստության հայ արքաների կողմից: Դրամահատությունը Մեծ Հայքում սկիզբ է առել Ք.ա. 189 թ. – Ք.հ. 1 թ. Արտաշեսյան հարստության շրջանում Տիգրան II Մեծի օրոք: Ք.ա. 95-55թթ. Տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Արտաշատում, Տիգրանակերտում, Մծբինում, Անտիոքում, Դամասկոսում, հատվել են մեծ քանակությամբ արծաթե և պղնձե դրամներ:

Սեփական դրամի մասին հիշատակումների ժամանակ սովորողները ներկայացնում են հետևյալ պատկերները՝

Ի՞նչ գիտեք Հայաստանի Առաջին Հանրապետության փողի մասին

Սովորողները նշում են, որ XX-րդ դարի 20-ականներին շրջանառության մեջ է դրվել արժույթ, որը ստանում է «Հայկական ռուբլի» անվանումը: 1918 թ.–ի մայիսի 28-ին անկախ հռչակված Հայաստանի Առաջին Հանրապետությունը շրջանառության մեջ է դնում Պետբանկի Երևանյան բաժանմունքի չեկերը, այնուհետև՝ 50, 100 և 250 ռուբլի անվանական արժեքով թղթադրամները: Սովորողները ներկայացնում են այդ փողի տեսքը՝

Կարո՞ղ եք ներկայացնել տեղեկություններ Անկախ Հայաստանի առաջին փողի մասին:

Հայաստանում անկախություն հռչակվեց 1991 թվականին, բայց մինչ 1993 թվականը խորհրդային ռուբլին շարունակում էր մնալ շրջանառության մեջ: Միայն 1993թ.-ի նոյեմբերի 22-ին Հայաստանի տարածքում ներդրվեց ազգային արժույթը՝ դրամը: Հենց այս օրն էլ երկրում սկսվեց նշվել որպես Հայկական դրամի օր: Որպես օրինական վճարամիջոց սկսում են շրջանառվել 10, 25, 50, 100, 200 և 500 դրամ անվանական արժեքով թղթադրամները: Սովորողները ներկայացնում են այդ թղթադրամների տեսքը՝

Կարո՞ղ եք ներկայացնել տեղեկություններ հայկական թղթադրամների երկրորդ սերնդի մասին:

1998 թ.–ից սկսած թողարկվում են երկրորդ շարքի 50, 100, 500, 1000, 5000, 10000 և 20000 դրամ անվանական արժեքով թղթադրամները, որոնք իրենց ձևավորմամբ, պաշտպանվածությամբ և պատրաստման որակով համապատասխանում են ժամանակակից թղթադրամների տպագրության պահանջներին: 2001թ.-ին շրջանառության մեջ է դրվել նաև 50,000 դրամանոց հոբելյանական թղթադրամը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Սովորողները ներկայացնում են այդ թղթադրամների տեսքը՝

Կարո՞ղ եք ներկայացնել տեղեկություններ հայկական թղթադրամների երրորդ սերնդի մասին:

Հայկական դրամի 25-ամյակի կապակցությամբ Հայաստանի Կենտրոնական բանկը 2018 թվականի նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ դրեց երրորդ սերնդի հիբրիդային (կոմպոզիտային) թղթադրամները՝ 10 հազար, 20 հազար և 50 հազար դրամ անվանական արժեքով: 1000, 2000 և 5000 դրամ արժեքով թղթադրամները շրջանառության մեջ են դրվել 2018 թվականի դեկտեմբերի 25-ին:

Ուսուցիչը սովորողներին ներկայացնում է, որ դասի նպատակն է մոդելավորել հայկական դրամի իրենց համար ցանկալի տարբերակները և մեկնաբանել դրանք:

Իմաստի ընկալման փուլում սովորողները բաժանվում են 4 հոգանոց խմբերի: Սովորողներին առավելագույնս ներգրավելու համար խմբի ներսում կատարվում է դերերի բաշխում, օրինակ՝ մտքերը գրառող, ժամանակի կառավարումը վերահսկող և այլն: Ուսուցիչը սովորողներին տրամադրում է նախապես պատրաստված աշխատանքային ուղեցույց, որը օգնում է սովորողներին առավել հեշտ կողմնորոշվել:

Կշռադատման փուլում խմբերը ներկայացնում և մեկնաբանում են իրենց էսքիզները: Կատարված աշխատանքների վերաբերյալ դիտարկումներ և վերլուծություններ կատարում են առանձին խմբերից ընտրված ներկայացուցիչներ: Ուսուցչի ուղղորդմամբ կատարում են լրացումներ, շտկումներ: Կատարվում է գնահատում ըստ գնահատման սանդղակի չափանիշների: Հանձնարարվում է տնային աշխատանք:

2.2. Դասավանդման նորագույն մոտեցումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հայկական դրամի պատմության դասավանդման գործընթացում

Պատմության դասավանդման գործընթացի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ կարիք կա գործընթացը համալրել մի շարք կարևորագույն դրույթներով՝ ամենևին միտք չունենալով նսեմացնել գոյություն ունեցող մոտեցումները: Առաջին հերթին, կարծում ենք, որ առանձնակի նշանակություն պետք է հիմնախնդրային ուսուցմանը: Հիմնախնդրային ուսուցումը պատմության դասավանդման գործում ամենապահանջված և արդյունավետ մեթոդներից է: Նոր նյութը ներկայացնելուց առաջ ուսուցիչը սովորողների առաջ դնում է հարց/հիմնախնդիր, որի պատասխանը նրանք պետք է ստանան նյութի բացատրման ընթացքում: Այս ընթացքում աշակերտները ներգրավվում են որոնողական և ճանաչողական գործընթացում: Ուսուցիչը նյութը ներկայացնում է՝

զուգակցելով տեսական գիտելիքները պատմական փաստերի հետ: Մեթոդիստների կարծիքով «Շարադրանքը համարվում է հիմնախնդրային, եթե այն իր ողջ բովանդակությամբ և բացահայտման միջոցներով առաջադրում է ինչ-որ հարց, որը պահանջում է լուծում, սակայն ուղիղ լուծում չի տալիս և սովորողներին ստիպում է փնտրել պատասխանը: Այդ դեպքում առաջանում է հիմնախնդրային իրավիճակ»[9]:

Հիմնախնդրային մեթոդը ուղղված է ակտիվ մտածողաորոնողական գործունեության միջոցով գիտելիքների յուրացմանը: Սա բարդ գործընթաց է, որը պահանջում է ոչ միայն հիշել ունեցած գիտելիքները, այլ նաև, մտածելով և դատողություններ կատարելով, գտնել պատասխանը: Այս մեթոդով կարելի է ներկայացնել և՛ ամբողջ դասանյութը, և՛ առանձին մասեր: Հիմնական դպրոցում հիմնախնդրային մեթոդը նպատակահարմար է սկսել երկրորդ ձևից:

Հիմնախնդրային հարցը տարբերվում է հիմնախնդրային իրավիճակից նրանով, որ առաջինը ունենում է ավելի հակիրճ ու կոնկրետ պատասխան: Կարևոր է հարցերը ժամանակին առաջադրել՝ նախորդելով շարադրվող նյութին և ստեղծելով հիմնախնդրային իրավիճակ: Շարադրելուց հետո տված հարցը հնարավորություն է տալիս ստուգել և ճիշտ ընկալել նյութը: Հիմնախնդրի պարզաբանումը չի ավարտվում մեկ դասով, այն կարող է պարզաբանվել մի քանի դասերի ժամանակ, կապված պատմական թեմայի կամ ժամանակաշրջանի հետ: Այն կարող է շարունակվի նաև տնային առաջադրանքի տեսքով[10]:

Տեսական գիտելիքների ճանաչողությունը հիմնախնդրային դասի միջոցով դառնում է նաև սովորողների զարգացման գործոններից մեկը, որը նպաստում է նրանց կողմից իրականության մեջ կողմնորոշվելու և գործունեության նոր ձևեր յուրացնելու հմտությունների ձեռքբերմանը:

Հայկական դրամի պատմության ուսուցման գործընթացում ուսուցիչը պետք է սովորողներին միտի վեր հանել հնարավոր բոլոր այն խնդիրները, որոնք առկա են հայկական դրամի ներկա տարբերակներում և առաջադրել դրանց լուծումներ: Համարելով հայկական դրամը բացառիկ արժեք, այնուամենայնիվ, պատմությունը ևս ցույց է տվել, որ դրա էսքիզների կատարելագործումը կարևորագույն հարց է:

Հայկական դրամի պատմության ուսուցման ընթացքում հիմնախնդրի դուրսբերումը կատարվում է հետևյալ շղթայով՝ ուսումնասիրություն, պրոբլեմային իրավիճակի ստեղծում, պրոբլեմային հարցի դուրսբերում, խնդիրների լուծման ուղիների փնտրում, ստուգում, կրկնում:

---

[9] Бурхонова Г.Г., Акрамова Н.М. Повышение профессиональной компетенции современного преподавателя // Проблемы науки. № 11-2. 2019., с.114.

[10] Турсунов О.А., Турдиалиев Х.Х., Сиддиков А.Р. Метод использования "проблемного обучения" в процессе преподавания общественно-гуманитарных наук: Вопросы науки и образования № 14 (139), 2021, с.49.

Հաջորդ կարևորագույն հիմնախնդիրը, որը ենթակա է լուծման, տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներգրավումն է: Օրինակ, երբ սովորողներին հանձնարարվում է մշակել էսքիզներ կամ մոդելավորել որևէ գործընթաց, սովորողների աշխատանքային գործընթացը հեշտացնելու նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է ունենալ անհրաժեշտ ծրագրային ապահովումներով համակարգիչներ:

Հաջորդ կարևոր դրույթը, որը կարիք ենք համարում ընդգծել, «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման գործընթացում արտադասարանային աշխատանքների կազմակերպումն է: Հայոց պատմության դասավանդման արդիականությունը ուղղակիորեն կապված է ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացի ձևավորելու, խնդրի հետ: Այս խնդրի լուծումը չի սահմանափակվում դաս-դասարանային մեթոդներով, այլ ենթադրում է արտադասարանային տարբեր աշխատանքների կազմակերպում: Արտադասարանական աշխատանքը ուղղված է պատմական անցյալի ու ներկայի ճանաչողությանը, պատմական գիտելիքների խորացմանը, աշակերտների մոտ բազմակողմանի հետաքրքրությունների զարգացմանը: Այն կազմակերպվում է դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, պատկերացումները և դադողությունները խորացնելու: Արտադասարանական աշխատանքները դասակարգվում են ըստ մասնակցության թվի՝ զանգվածային, խմբային և անհատական: Արտադասարանական աշխատանքի ընթացքում պատմական նյութի մատուցման համար կիրառվող միջոցները տարբերվում են դասարանայինից: Այս դեպքում հնարավոր է աշակերտներին ծանոթացնել հնագիտական, վիմագրական և այլ նյութերի, որը դասարանում մատչելի չէ: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ինքնուրյուն իմաստավորել երևույթները:

Պատմության ուսուցման համար կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաները: Դրանք կարող են լինել էքսկուրսիաներ պատմամշակութային նշանակություն ունեցող հուշարձաններ, վայրեր, թանգարաններ, պետական կամ ոչ պետական հաստատություններ: Հայկական դրամի պատմության դասավանդման ընթացքում հնարավորության դեպքում կարելի է կազմակերպել այցելություն ՀՀ Կենտրոնական բանկ և անցկացնել դաս-էքսկուրսիա, որը պատմության դասավանդման արդյունավետ դասի տիպերից է դաս-էքսկուրսիան: Այն դիտվում է որպես ուսուցչի և սովորողների առանձնահատուկ համագործակցության ձև: Դաս-էքսկուրսիայի առավելությունը նրանում է, որ էքսկուրսիայի միջոցով դասի ժամանակ ուսումնասիրած նյութին, առարկաներին և երևույթներին աշակերտները կարող են հետևել բնական պայմաններում կամ թանգարանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ պատմության դասավանդումը դպրոցում, հատկապես «Հայոց պատմություն» առարկայի, ըստ պետական հայեցակարգի, կապվում է հայի ազգային ինքնագիտակցության ու մտածողության հետ, նրա միջոցով ապահովվում է աճող սերնդի հաղորդակցումը մեր ժողովրդի անցյալի և պատմամշակութային ժառանգությանը: Այստեղից է բխում քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը: Դաստիարակչական խնդիրները, հենվելով գաղափարական հիմքերի վրա, անդրադառնում են ուսուցման նյութի բովանդակությանը: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ: Պատմակն գիտելիքների փոխանցման, օրինաչափությունների յուրացման գործընթացը իրականացնում է անձի դաստիարակման և զարգացման տարբեր միջոցներով:

Հայկական դրամի պատմության ուսուցանմամբ սերունդների մեջ վառ է պահվում հայկական դրամի ձևավորման և զարգացման պատմության վերաբերյալ գիտելիքները և ձևավորում է հայկական դրամին առավել խնամքով և մեծ պատասխանատվությամբ վերաբերվելու ունակություն:

Հիմք ընդունելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք՝

- Հայկական դրամի պատմության և «Հայոց պատմության» այլ թեմաների դասավանդման գործընթացում առաջնություն տալ հիմնախնդրային ուսուցմանը, որը թույլ կտա գնահատել արդեն իսկ առկա պատմական վկայությունները, փաստերը և քննադատական մտածողության զարգացման արդյունքում առաջարկել պատմական զարգացման հետագա ուղիներ:

- Միջոցներ նախատեսել կամ ներգրավել «Հայոց պատմության» դասաժամերի անցկացումը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցնելու ուղղությամբ:

- Առաջնություն տալ արտադասարանային միջոցառումների կազմակերպմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացումները https://www.cba.am/am/SitePages/achfinancialbankingsystem.aspx 17.10.2022, ժամը 21:44 դրությամբ .
2. Հայոց պատմություն. Հիմնահարցեր, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:/ Մ.Ա.Կատվայան, Պ.Հ.Հովհաննիսյան, Լ.Հ.Մկրտչյան և ուրիշներ: Ուս. Ձեռնարկ ոչ մասնագիտական ֆակուլտետների համար./ խմբագիր Հր.Ռ.Սիմոնյան., Եր., Զանգակ-97, 2000., էջ 467:
3. Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ /Հայոց պատմություն/ https://escs.am/am/news/6703 15.10.2022, ժամը 11:09 դրությամբ .
4. Մկրտումյան Լ. Ա. Հայոց պատմություն: Ուսումնական ձեռնարկ/ Լ. Ա. Մկրտումյան.–Եր.: Տնտեսագետ, 2016., էջ 23:
5. Аникеев А.А., Ушмаева К.А. Методика в организации исторического исследования. – Пятигорск, 2004., с.49.
6. Бурхонова Г.Г., Акрамова Н.М. Повышение профессиональной компетенции современного преподавателя // Проблемы науки. № 11-2. 2019., с.114.
7. Басова Е.А. Методы обучения: сравнительный анализ современных концепций и взглядов Я.А. Коменского / Е.А. Басова, Д.А. Бондарчук // Интерактивная наука. – 2021. – № 6 (61). – с. 36-38.
8. Кацва Л.А., истории в современной российской средней школе. Размышления консерватора / Л. А. Кацва // Преподавание истории в школе. — 2007. — N 6. — С. 31-36.
9. Турсунов О.А., Турдиалиев Х.Х., Сиддиков А.Р. Метод использования "проблемного обучения" в процессе преподавания общественно-гуманитарных наук: Вопросы науки и образования № 14 (139), 2021, с.49.
10. Шубина, О.Н. Характеристика методов и способов обучения по Ю.К Бабанскому / О.Н. Шубина // Обучение и воспитание: методики и практика. - 2016. - № 30-1. - С. 148-149.